

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (26-րդ տարի)

Այս թիւով.....

Մայիս 2026 (ԼԳ տարի թիւ 9)

Մայիս Ամսուան Բացատրական
Տօնացոյց Էջ 2-9



Յիսուսի Համբարձումը
Յինանց Օրեր
5-րդ Պատուիրանը
Մայր
Աշխարհամատրան կամ Կանաչ
Կիրակի
Կարմիր Կիրակի
Սուրբ Խաչի Երեսման Տօն
Համբարձման Տօնը

Սարդարապատ Էջ 10

1918 Թուականի Մայիսեան
Հերոսամարտը եւ Հայ Եկեղեցին Էջ 11

Հինգ հազարին կերակրումը Էջ 12

Ո՞րն է Ճիշդ Պատասխանը Էջ 13-16

Լուրեր եւ նկարներ Կիրակնօրեայէն
Էջ 17-19

Ամավերջի Հանդեսի Հրաւեր Էջ 20

Հ...Համբարձում

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք:
Զանոնք մկրտեցէք՝ ջոր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց ստրվեցուցէք
այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի, եւ ահա ես ձեզի հետ պիտի ըլլամ,
մինչեւ աշխարհիս վախճանը: *Մատթէոս 28.19-20*»

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

<https://www.facebook.com/sourphagop.org>

https://www.instagram.com/sh_sundayschool/

Մայիս Ամսուան Բացատրական Տօնացոյց

Կիր. 3	Սուրբ Խաչի Երեւման Տօն
Եջ. 14	Տօն Քրիստոսի Համբարձման
Կիր. 17	Երկրորդ Ծաղկազարդ
Կիր. 24	Հոգեգալուստ, Պենտեկոստէ
Եջ, 28	108-րդ տարեդարձ Հայաստանի Ա. հանրապետութեան
Կիր 31	Յիշատակ՝ Եղիա մարգարէի Պահքի Օրեր 25-30



Յիսուսի Համբարձումը

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը նստելու յիշատակումին տօնն է, որ տեղի կ'ունենայ միշտ Հինգշաբթի օր, Յարութեան 40-րդ օրը:

Յարութենէն ետք, Յիսուս իր աշակերտներուն երեւնալէ ետք, 40-րդ օրը իր աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռ բարձրացաւ ուր յայտնեց իր աշակերտներուն. «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք ու իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի, եւ Սամարիայի մէջ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ ան կ'արտասանէ այս խօսքերը, Յիսուս երկինք կը բարձրանայ մինչեւ որ ամպերը ծածկեն զինք աշակերտներուն տեսողութենէն: Այս պատուիրանին համաձայն Թադէոս ու Բարթողիմէոս Առաքեալները Հայաստան կու գան հիմնելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

ՅԻՆԱՆՅ ՕՐԵՐ

Ինչպէս ունինք Չատիկէն առաջ 50 օրերու տրտմութեան եւ սպաշխարանքի շրջան մը, հաւատացեալը նախապատրաստելու համար եկեղեցական մեծագոյն այս տօնին, այնպէս ալ ունինք Չատիկէն յետոյ 50 օրերու հոգեւոր ուրախութեան շրջան մը, որ շարունակութիւնը եւ երկարաձգումն է Չատիկի խորհուրդին եւ վայելքին: Յարութեան տօնին յաջորդող այս օրերը ծանօթ են տօնացոյցի մէջ ՅԻՆՈՒՆՔ կամ ՅԻՆԱՆՅ ՕՐԵՐ անունով:

«Յինունք»-ի արմատը՝ կամ եզակին պէտք է ըլլայ ԻՆՆ բառը. եւ ենթադրութիւնը այն է, որ Յինունք կը նշանակէ այն 9 յաջորդական Կիրակիները, որոնք կը սկսին Չատիկով եւ կը վերջանան Յարութեան առաջին Կիրակիով, որ կը յաջորդէ Հոգեգալուստին: Յատկանշական երեւոյթը այն է, որ Սրբոց տօներ տեղի չեն ունենար Չատիկէն մինչեւ Յարութեան առաջին Կիրակի երկարող ժամանակամիջոցի ընթացքին:

Յինունքը կը գործածուի Չատիկէն Հոգեգալուստ երկարող 50 օրերու շրջանին համար: Անոր առաջին 40 օրերը, որոնք կը յանգին Համբարձման տօնին, ամբողջութեամբ նուիրուած են Քրիստոսի յարութեան փառաբանութեան. ուրիշ խօսքով քառասնօրեայ այս շրջանին ամէն մէկ օրը Կիրակի է, որոնց ընթացքին կ'երգուին Կիրակի օրերուն յատուկ շարականները (ի բացառեալ Կարմիր Կիրակիէն):

Յինունքի եօթը Կիրակիները կը կոչուին հետեւեալ անուններով. Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ, Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Երեսման Ս. Խաչ, Հինգշաբթի օրը Համբարձում, ապա Երկրորդ Ծաղկազարդ եւ Հոգեգալուստ:

5-րդ պատուիրանը.
«Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի կեանքդ երկար ըլլայ այն երկրին վրայ, որ ես՝ Տէրը, քու Աստուածդ, քեզի կու տամ:»

ՄԱՅՐ

Մեր բոլոր բանաստեղծները ամենէն քնքոյշ եւ սրտաթով բառերը վերապահած են մայրերուն: Մայրութիւնը այնքան նուիրական արժէք մը եղաւ հայ ժողովուրդին համար որ մայր բառը դարձաւ բնորոշիչ բառը հայոց ամենէն նուիրական սրբութիւններուն.

- Մայր Եկեղեցի, Մայր Աթոռ, Մայր Տաճար
- Մայր Հայաստան, Մայր հայրենիք, Մայրաքաղաք
- Մայրենի լեզու
- Մայր Արաքս:

Դուք ձեր կեանքով, նուիրումով, գոհողութեան գերազանց արտայայտութեամբ ամենէն մեծ դաստիարակներն էք հայ ժողովուրդի զաւակներուն: Ձեր դասագիրքը Ձեր սերն է, ձեր գրիչը՝ ձեր ժպիտը...

Արեգակի լոյսին պէս թող այդ ժպիտը միշտ ծագի հայ մանուկներու աչքերուն մէջ, երբ անոնց աչքերը բացուին աշխարհի լոյսին:

Գարեգին Բ. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ

ՄՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՒՄԱՆ ՏՕՆ

Ի յերկնից երևեալ նշանն յաղթութեան այսօր, հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան (Շարական)

Ամէն տարի՝ Ս. Զատկին յաջորդող հինգերորդ կիրակի օրը, մեր երանաշնորհ հայրապետներու տնօրինութեան համաձայն, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի երևման տօնը՝ մէկ անգամ ևս յիշելով Տիրոջ չարչարանքները, անոր խաչելութիւնը եւ խաչի վրայ անոր թափած անմեղ արեան շնորհիւ մարդկային ցեղի փրկութիւնը: Այս տօնը պատմական դէպքի մը յիշատակութիւնն է:

351 թուի Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղեմացի հայրապետի օրով, օրուայ երրորդ ժամուն (ժամը 9-ին) երկնքի վրայ կ'երեւի Փրկիչի խաչի նշանը՝ տարածուելով Գողգոթայէն մինչև Ձիթենեաց լեռը: Այս դէպքին ականատես կ'ըլլան ոչ միայն Երուսաղեմի մէջ բնակող քրիստոնէաները, այլև տարբեր դաւանանքներու ու կրօններու պատկանող մարդիկ: Խաչի պայծառ երևումէն նոյնիսկ արեգակը կը մթագնի: Բոլորը կը շտապեն եկեղեցի, իրենց սրտի խորերէն աղօթելու առ Աստուած՝ գոհութիւն յայտնելով Բարձրեալին՝ այս մեծ շնորհին արժանացած ըլլալու համար: Երկնային հրաշքի շնորհիւ շատեր կը հաւատան Յիսուսին, կը մկրտուին սուրբ Կիւրեղի ձեռքով՝ անդամագրուելով Քրիստոսի Եկեղեցոյ: Այս դէպքին առթիւ Կիւրեղ հայրապետ նամակ մը կը գրէ Բիւզանդիայի Կոստանդին կայսրին, որ Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակին մէջ սուրբը կը պատմէ Երուսաղեմի խաչի երևման մասին՝ յորդորելով, որ վերջինս հաստատ Կայսր իր քրիստոնէական ճշմարիտ հաւատքի մէջ, ինչպէս նաև հաւատարիմ՝ նիկիական դաւանութեան: Այս թուղթը Ե. դարուն կը թարգմանուի հայերէնի և կ'ընթերցուի տօնի օրուայ առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ կատարուող անդաստանէն առաջ:

Մեր բազմադարեան պատմութեան մէջ ալ քիչ չեն խաչի երևումները: Երանելի Կորիւնը, ինչպէս նաև քերթողահայր Մովսէս Խորենացին, Հայ Եկեղեցոյ երրամեծ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահուան և թաղման կապակցութեամբ արձանագրած են, որ Վաղարշապատ քաղաքին մէջ օրեր շարունակ խաչի լուսապայծառ նշանը փայլեր է այն տան վրայ, ուր սուրբն աւանդեր էր իր հոգին: Այդ նոյն նշանն ալ առաջնորդ է եղեր բազմութեան՝ ամբողջ յուդարկաւորութեան ընթացքին: Եւ այսքան տարիներ յետոյ, շատերու մօտ հարց կրնայ ծագիլ թէ ի՞նչ է խաչը քրիստոնէաներու համար, և ի՞նչ է անոր նշանակութիւնը:

Խաչը Հռոմէական կայսրութեան ժամանակ մահապարտները անարգելու և նախատելու համար էր: Խաչելութիւնը ոչ միայն անպատուաբեր վախճան կը համարուէր, այլև հին աշխարհի յայտնագործած ամենամարդկային և դաժան պատիժներէն մէկն էր: Դատապարտեալը մերկ կը գամէին խաչին՝ ենթարկելով զանազան մարմնական խոշտանգումներու: Եւ խաչեալը կը տանջուէր, արևի կիզիչ ճառագայթները կ'այրէին անոր գլուխը, անբնական վիճակէն մարմինը կ'ուռճանար, վերքերը կը բորբոքէին՝ անտանելի ցաւեր պատճառելով: Մահապարտը, երկար տանջուելէ յետոյ, կ'աւանդեր հոգին: Այդ ժամանակ տախտակներէ շինուած այդ գործիքը մահուան խորհրդանիշն էր: Հին Կտակարանին մէջ կը կարդանք. «Անիծեալ է ան, որ փայտէ կը կախուի» (Բ Օր. ԻԱ 23), բայց մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոս խաչի վրայ հեղած իր թանկագին արեամբ կենաց և օրհնութեան միջոցի վերածեց զայն «այդ անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով» (Գղ. Գ 13): Աստուածորդին միացաւ խաչափայտին՝ սրբագործելով զայն և մեզ տալով «զէնն յաղթութեան» ընդդէմ սատանայի ու անոր խաբկանքներուն:

Եթե մինչև Քրիստոս խաչը անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելութեամբ անոր մեջ դրուեցաւ կեանքի խորհուրդը, և մարդ արարածը հնարաւորութիւն ստացաւ նոր արարած ըլլալու. «Ուեւ մէկը որ Քրիստոսի միացած է նոր արարած է. այլևս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս» (Բ Կր. Ե 17): Քրիստոս խաչի վրայ ներեց մեզի, մեր մեղքերու պարտամուրհակը վերցուց մեջտեղէն՝ գամելով զայն խաչափայտին:

Մարդկութեան փրկութեան համար մարմնացած Աստուած խաչուեցաւ, թաղուեցաւ, բայց երրորդ օրը հրաշափառապէս յարութիւն առաւ մեռելներէն՝ քանդելով մահուան կապանքները: Այո՛, յարութիւն առաւ Տէրը, որովհետև Լոյսը չէր կրնար գերեզմանի մթութեան մեջ մնալ: Եւ այս իրողութիւնը նկատի ունենալով է որ սուրբ Կիրեղ Երուսաղէմացին կ'ըսէ. «Կը դաւանիմ Խաչը, քանզի գիտեմ Յարութիւնը»:

Հետևաբար խաչը մեզ համար յոյսի, սիրոյ, յաղթանակի և փրկութեան նշանն է, որուն վրայ Աստուածորդին պարտութեան մատնեց սատանային՝ մեր առջեւ բանալով դրախտի դուռը, որ մինչ այդ փակուած էր մեր նախածնողներ Ադամի ու Եւայի անհնազանդութեան պատճառով: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրն ու անբաւ ողորմածութիւնը աղամորդիներու և նկատմամբ: Տէրն իր փրկագործութեան խորհուրդով խաչը վերածեց յաղթութեան նշանի: Եւ այս գիտակցութեամբ ու խոր համոզումով է որ քրիստոնէութեան մունետիկ Պօղոս Առաքեալ ի լուր բոլորին կ'ազդարարէ. «Քաւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ» (Գղ. 2 14): Այո՛, տէրունական նշանը ճշմարիտ քրիստոնէաներու և համար պարծանքներու պարծանքն ու Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնն է անկեալ մարդու նկատմամբ: Ճիշդ է, անհաւատ ու Տէրը չճաշակած մարդոց համար խաչի վրայ Քրիստոսի այս զոհողութիւնն անիմաստ և անհասկնալի կը թուի, բայց մեզի համար, որ մեր սրտերուն մեջ ընդունած ենք ճշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոս, խաչը դարձած է փրկութեան գրաւականը: Անգիտութեան խաւարին մեջ խարխափող այս մարդոց մասին է առաքեալի խօսքը. «Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մեջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին» (Փլպ. Գ 18-19):

Ապաւինելով խաչի զօրութեանը՝ մենք կը խափանենք չարը, խաչակնքելով, մենք մեզի Աստուծով կը զօրացնենք, եւ անով կը զարդարենք մեր հողակերտ եկեղեցիները, անով կը կնքենք մեր զաւակները, անով կը պսակուինք, անով ալ գերեզման կ'իջնենք յաւիտենական կեանքի յոյսով: Ինչպէս Տիրոջ երկրային կեանքը խաչի ճանապարհ մը եղաւ, այնպէս ալ քրիստոնէաներու և համար այս ժամանակաւոր կեանքը խաչի ճանապարհ է: Ճանապարհ մը, որ անցուկ ու դժուար է, քարքարոտ ու փշոտ, բայց որու վերջնական հանգրուանը Տիրոջ խոստացած երկնային արքայութիւնն է: Սուրբ խաչի երևման տօնէն բխող պատգամն է, որ խաչակնքումը մեզի համար ոչ թէ ձեւական ու մեքենական շարժում մըն է, այլ ամէն անգամ երբ կը խաչակնքենք պահ մը կ'անդրադառնանք այն մեծ ինքնագոհութեան, որ Աստուած իրականացուց խաչին վրայ մեր փրկութեան համար: Մեր աղօթքը կը վերառաքենք առ ամենաբարին Աստուած՝ կրկնելով սուրբ հայրերու շուրթերուն բիրեղացած սրտառուչ մաղթանքը.

Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս,
յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:
Յայնժամ մեք մի՛ ամաչեցուք
յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով
մեծաւ բերկրեցուք ընդ աջմէ քումմէ
որպէս զորդիս լուսոյ և որդիս տուրնջեան:

Համբարձման Տօնը

Համբարձումն էկա ծաղկունքը ավան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

Յովհաննէս Թումանեանի «Անոյշ»-էն

Ի՞նչ տօն կը նկարագրուի վերի քառեակին մէջ:



«Համբարձում» բառը որպէս արմատ ունի հին հայերէնի՝ գրաբարի «համբառնալ» բայը: Կը նշանակէ վեր բարձրանալ, վեր ելլել: Խաչելութենէն ետք յարութիւն առնելով՝ Յիսուս Քրիստոս երկրի վրայ Թագաւորութեան օրեր եւս: Այդ ընթացքին, հանդիպելով առաքեալներուն՝ պատուիրեց անոնց երթալ Ձիթենեաց լեռը: Այդ լեռան վրայ Յիսուս օրհնեց զանոնք, պատուիրեց անոնց քարոզել ու տարածել քրիստոնէութիւնը: Այնուհետեւ Ան բարձրացաւ երկինք: Երկրէն երկինք Յիսուսի այս փոխադրութիւնը Նոր Կտակարանին մէջ կը կոչուի «Համբարձում»: Ս. Յարութեան տօնին մէջ «Համբարձումը» 35 օրուայ շարժականութիւն ունի եւ ամէն տարի Ս. Զատիկուան Կիրակիին յաջորդող 40-րդ օրն է, որ միշտ Հինգշաբթի կ'ըլլայ:

Տօնակատարութիւնները

Համբարձման տօնին նախորդող գիշերը ժողովուրդին կողմէ անուանուած է Համբարձման գիշեր: Այդ գիշեր աղջիկները ծաղիկներ կը հաւաքեն եւ եօթ աղբիւրներ ջուր կը լեցնեն մէկ սափորի մէջ: Հաւաքուած ծաղիկներով փունջ կը կապեն եւ անով կը ծածկեն սափորի բերանը: Գիւղերուն մէջ, սափորը կը դնեն դուրսը, բաց երկնքի տակ, որպէսզի ան ծածկուի համբարձման ձօնով:

Առաւօտեան, աղջիկները տարբեր բանաստեղծական քառեակներ կը գրեն եւ կը դնեն այս սափորին մէջ: Վերջապէս հերթով կը հանեն գրուած երգերը այն հաւատքով, թէ անոնց մէջ ինչ որ գրուած է, կ'իրականանայ: Ահա այդ պատճառով այս երգերը կը կոչուին վիճակի երգեր: Այսինքն, իբրեւ թէ երգերուն մէջ գրուածը վիճակուած ըլլայ զանոնք հանող աղջիկներուն:

Երջանիկ ապագայի յոյսով վիճակ ձգելու այս գեղեցիկ սովորութիւնը ժողովուրդին մէջ յայտնի է «Զան Գյուլում» անունով:

Դէ հանի՛ր աղջի
Վիճակն ի բարին
Երգերով գովենք
Էն իգիթ՝ եարին




կամ

Համբարձման Տօնը (շաբ.)

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարուած
Մեր բաղտին հարցում
Ո՞վ է մեզ գրուած

Աւանդութիւններ

Ըստ ժողովրդական
աւանդութեան՝ Համբարձման գիշերը
բոլոր ծաղիկներն ու բոյսերը կը սկսին
իբրար հետ գրուցել եւ ըսել, թէ իրենք
ի՞նչ ցաւ կրնան բուժել, կամ իրենց
արմատներուն մօտ ի՞նչ գանձ կայ
պահուած: Ահա այս պատճառով
մարդիկ այդ գիշեր կը փորձեն



հասկնալ ծաղիկներու լեզուն որպէսզի
իմանան անոնց գաղտնիքները:
Համբարձման գիշերուայ մասին հայոց
մեծ բանաստեղծը գրած է՝

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր

Կայ հրաշալի երջանիկ վայրկեան

Բացում են ոսկի երկնքի դռներ,

Ներքեւ պապանձում, լռում ամէն բան,

Ու Աստուածային անհաս խորհրդով

Լեցում բովանդակ անոր սուրբ գրով:

Յովհաննէս Թումանեան «Անոյշ»-էն

Հոգեգալուստ Պենտէկոստէ (50)

Հոգեգալուստը տեղի ունեցաւ Համբարձումէն 10 օրեր ետք եկող Կիրակի օրը: Ըստ Համբարձեալ Յիսուսի խոստումին, Սուրբ Հոգին հրեղէն լեզուներու պէս հանգչեցաւ Առաքեալներուն վրայ, որոնք զօրութեամբ լեցուեցան, եւ տարբեր լեզուներ խօսելու կարողութիւնը ունեցան: Այսպիսով կրցան Քրիստոսի Աւետարանը քարոզել Աշխարհի տարբեր երկիրներէն ժամանած հրեաներուն, որոնք եկեր էին Պենտէկոստէ (Զատիկէն 50 օրեր ետք նշուող) երկու տօները տօնելու

ա. Առաջին հունձքը Տիրոջ նուիրելու Տօնը.

բ. Մինա լերան վրայ Աստուծոյ տասնաբանեայ պատուիրաններուն տուչութեան: Նկատելով որ Քրիստոսի յարութիւնը եւ Հոգեգալուստը տեղի ունեցան Մէկշաբթի օրը, Մէկշաբթին դարձաւ Տերունի օր եւ կոչուեցաւ Կիրակի:

ՇԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏԻ

– *Օրհնութիւն* –

Առաքելոյ աղանոյ իջանելով մեծաձայն հրնչմամբ ի բարձանց,
Ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզբէի զաշակերտսն,
Մինչդեռ նրստէին ի սուրբ վերնատանն:

Աննիրական աղանի, անքրննելի որ քննէ ըզխորս Աստուծոյ.
Չոր առեալ ի Հօրէ պատմէ գահաւոր եւ ըզմիսանգամ գալուստն.
Չոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն սրբոյ.
Որով առաքեալքն արբեցան անմահական բաժական,
Եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Երկնառաքեալ Աղանին, բարձրաձայն հնչմամբ իջաւ Աստուծմէ
Փայլուն լոյսի նմանութեամբ, անսպառ կրակով զինեց աշակերտները.
Երբ նստած էին ի սուրբ վերնատուն:

Աննիրական աղանին, որ կը քննէ խորքերն Աստուծոյ,
Հօրմէն իմացած կը պատմէ ահաւոր եւ միսսանգամ գալուստն,
Չոր որպէս համագոյ (Հօր եւ Որդւոյ) քարոզեցին:

Օրհնութիւն երկինքին, Հօրմէ Բխող Սուրբ Հոգիին.
Որով առաքեալներ լեցուեցան, որպէս անմահ բաժակէն.
Եւ հրաւիրեցին երկիրս դէպի երկինք:

Եղիա մարգարե

Հին Կտակարանի մեծ մարգարեներն է, որ յայտնի է Տիրոջ հանդեպ ունեցած իր հաւատարմութեամբ, հաւատուրաց Աքաաբ թագաւորի ու անոր կռապաշտ Յեզաբել թագուհիի կողմէ Իսրայէլի մէջ սերմանուած կռապաշտութեան դէմ նախանձախնդիր պայքարով:

Եղիա մարգարեն ապրած է եւ գործած է Քրիստոսէ առաջ 9-րդ դարուն: Անոր մասին կը պատմուի Գ. Թագաւորաց (17-18) եւ Դ. Թագաւորաց (1-2:1-15) գիրքերուն մէջ, անոր անունը կը յիշատակեն նաեւ աւետարանիչները:

Յիսուսի այլակերպութեան ընթացքին (Մատթ. 17.1-13, Մար. 9.2-13, Ղուկ. 9. 28-36) գրուած է.

«Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ»...: ...Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի.

- Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ:

Յիսուս պատասխանեց.

- Ճիշդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամեն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է...: Այս ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան»:

Գ. Թագաւորաց գիրքին մէջ կը կարդանք, թէ ինչպէս Եղիան, իբրեւ Աստուծոյ խօսքի ճշմարիտ բանբեր, աստուածային տնօրինութեամբ յայտնուած է հաւատուրաց Աքաաբի առջեւ եւ յայտարարած է սպասուող երաշտի մասին:

Եղիա Աքաաբն ու ժողովուրդը գիտակցութեան բերելու համար Աստուծմէ խնդրեց որ անձրեւը կեցնէր: Երեք ու կէս տարի ետք Եղիա Կարմեղոս լեռը կանչեց թագաւորը, եւ բազմահազար ժողովուրդին առջեւ ծաղրեց կուռքերն ու չաստուածները, ամօթահար ըրաւ անոնց պաշտօնեաները, աղօթեց եւ խնդրեց Աստուծմէ որ երկինքէն կրակ իջեցնելով այրէր իր զոհը, ընդունէր իր աղօթքը եւ անձրեւ ղրկէր երկրին: Աստուած ընդունեց Եղիային աղօթքը, երկինքէն կրակ իջեցնելով այրեց մատուցուած զոհը եւ ապա անձրեւ ղրկեց, ու բոլոր բազմութեան յայտնի եղաւ թէ միայն Եհովան է ճշմարիտ Աստուածը եւ կուռքերը փուճ են:

Եղիա մարգարէին վերագրուած է զանազան հրաշագործութիւններ. թէ ինչպէս աստուածային զօրութեամբ անպակաս պահեց այրի կնոջ ալիւրի և իւղի ամանները, Յարութիւն տուաւ անոր մահացած որդւոյն եւ այլն:

Եղիան մահ չտեսաւ այլ երկինք վերցուեցաւ.

«Երբ անոնք (այսինքն Եղիան եւ Եղիսէն) խօսելով կ'երթային, ահա՛ կրակէ կառք մը եւ կրակէ ձիեր երեւցան, զանոնք իրարմէ զատեցին ու Եղիա մրրիկով երկինք բարձրացաւ»: (Դ. Թագ. 2.11)

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ



Գիտե՛ի՞ր թե՛

. Հայաստանի Հանրապետության Զինանշանին կեդրոնը Արարատ լեռն է, որուն վրայ կը հանգչի Նոյեան Տապանը:

. Հայերենը Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ Դեկտեմբեր 1919-ին:

. 1918-1920 Անկախ Հայաստանի վերջին դաշնագիրը՝ Սեւրի Դաշնագիրը ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920-ին:

1918 թուականի Մայիսեան Հերոսամարտը եւ Հայ Եկեղեցին

1918 թուականի սկիզբներուն, թրքական բանակը, արեւմտեան Հայաստանի հայերը ցեղասպանութեան ենթարկելէ վերջ, իր յառաջխաղացքը շարունակեց ձգտելով գրաւել նաեւ արեւելեան Հայաստանը: Այս սպառնալիքին դէմ կեցաւ հայ հասարակութիւնը իր ամբողջութեամբ, ներառեալ Հայաստանեայց եկեղեցին, որուն մասնակցութիւնը մայիսեան հերոսամարտին արժանի է յիշատակման: Նկատի ունենալով թուրքերու դէպի արարատեան դաշտ շարժումը, հայկական զօրքերու հրամանատարութիւնը դիմեց օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցին, առաջարկելով անոր Էջմիածնին յապառնացող վտանգին առջեւ կաթողիկոսական մայր աթոռը տեղափոխել աւելի ապահով տեղ՝ Բիւրական:

Ահա թէ ինչ էր կաթողիկոսին կոչը իր ժողովուրդին, առ ի պատասխան փախուստի այդ առաջարկին. «Ազգ հայոց, թուրքը մեր բանական հօտի դարաւոր թշնամին, նուաճել է Ալեքսանդրապոլը, շարժում է դէպի սիրտը մեր երկրի, մեր հաւատի, մեր կենսագրութեան: Գալիս է Արարատեան երկրի վրայ: Թուրքը, կոտորած ու արեւ սփռելով, գալիս է եւ մեր զօրապետներն էլ այլ էլք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը եւ սեփական կեանքը փրկել Բիւրականում կամ այլ անմատչելի լեռնածերպի վրայ: Ո՛չ եւ ոչ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից արանդուած մայր աթոռը: Ես չեմ հեռանայ Հայոց առաքելական եկեղեցու օճախից: Եթէ հայոց զինուորութիւնն ու ինքը՝ հայ ժողովուրդը չեն կարողանայ թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի զօրու չեն լինի մեր սրբութիւնները, ապա թող ես նահատակուեմ հենց այստեղ շեմի վրայ Մայր աթոռի, որու գահակալի պատիւն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխօսութեամբ եւ Աստուծոյ ողորմածութեամբ: Միթէ մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օճախի կրակը, մեր հաւատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթէ եկել է վերջը, ապա այն ինչ ո՞ւ չընդունենք պատուով ու քաջութեամբ եւ ոչ թէ ողորմելի զեռունի պէս ոսոխի առաջ սողալով: Մեր պատմութեան անցեալ դարերը լիքն են քաջութեան օրինակներով, ներկուած են նահատակների արեամբ: Դրանով չի սպառուել մեր արիւնը եւ չի կորսուել քաջութիւնը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպէս է ապրել՝ իր ինքնութեան համար պայքարելով, իր վաղուայ համար այսօր մեռնելով: Եւ որովհետեւ, ով գաղափարի՝ հետ է մեռնում, մեռնում է որպէս հատիկը ցորենի, ապա հատիկի մահով նոր կեանքեր են ծնուում վաղ թէ անագան: Դրա համար է, որ զանգուածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրութիւնը չի ունեցել եւ երբեք էլ չպիտի ունենայ վերջին վերջակէտ: Ուրեմն էլ ինչ ո՞ւ դաւենք ապրելու եւ գոյատեւելու մեր ազգային կերպին: Ինչ ո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դէմ, որ գալիս է անդրարաքսեան իր թեթեւ յաջողութիւններով յղիացած եւ մեր արեան վերջին կաթիլին ծարալի...»:

Եւ վեհարանի դահլիճին ու Մայր աթոռի բակին մէջ հաւաքուած ամբողջ բազմութիւնը կերպարանափոխուած միահամուռ բացագանչեց.

- Պատրաստ ենք ելնելու, Վեհափառ Տէր:

Ապա ծերունագարդ հայրապետը, իր արծուային հայեացքն ուղղելով ժողովուրդին շարունակեց.

- Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Ես համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խօսքը: Եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական:

Կաթողիկոսին խօսքը բազմացուեցաւ տպարանին մէջ եւ ուղարկուեցաւ ռազմաճակատ...

Հինգ հազարին կերակրումը

Յովհաննէս 6:1-13


Յիսուս կերակրեց մեծ բազմութիւն մը միայն գարիի հինգ հացով եւ երկու ձուկով: Աւելցած կտորներն ալ տասներկու սակառ լեցուցին: Աստուած միշտ հրաշքներ կը գործէ երբ մենք վստահինք եւ հաւատանք իրեն: Լուծէ հետեւեալները եւ գտիր բազմութեան թիւը .-



- 1- Բազմապատկէ ձուկերուն թիւը X գարիի հացերուն թիւով
- 2- Պատասխան =
- 3- Բազմապատկէ թիւ 2 պատասխանը X աւելցած սակառներու թիւով
- 4- Պատասխան =
- 5- Գումարէ ձուկերու թիւը + գարիի հացերու թիւը
- 6- Պատասխան =
- 7- Բազմապատկէ թիւ 4 X թիւ 6 պատասխանները
- 8- Պատասխան =
- 9- Բաժնէ սակառներու թիւը երկուքով
- 10- Պատասխան =
- 11- Բազմապատկէ թիւ 8 X թիւ 10 պատասխանները
- 12- Պատասխան =
- 13- Թիւ 12 պատասխանէն հանէ 40
- 14- Քանի՞ հոգի կերակրեց Յիսուս
- 15- Պատասխան =



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս 24.50-53ի
օրհնեց, երկինք, երկրպագեցին, զԱստուած, Բեթանիա,
բաժնուեցաւ, Երուսաղէմ
Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս -- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
վեր բարձրացնելով ----- զանոնք: Եւ մինչ
կ'օրհնէր, ----- անոնցմէ, դէպի -----
բարձրանալով: Անոնք ----- Յիսուսի եւ մեծ
ուրախութեամբ վերադարձան -----: Ամէն օր
տաճարին մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով -----
-----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Մայրերու օրը:

ա. Մայիս 8

բ. Մայիս 10

գ. Մայիս 12

դ. Մայիս 14

2.- Ասոնցմէ ո՞ր մէկը սխալ է:

ա. Նոր Կիրակի

բ. Սրճագոյն Կիրակի

գ. Կարմիր Կիրակի

դ. Կանաչ Կիրակի

3.- Հետեւեալներէն ո՞ր մէկուն

պատկերը Հայաստանի

Հանրապետութեան զինանշանին

վրայ կը գտնենք (երկու

պատասխան):

ա. Արարատ լեռը

բ. Նոյեան Տապանը

գ. 10 Պատուիրանները

դ. Յիսուսի Համբարձումը

4.- Հոգեգալուստը շաբթուան ո՞ր

օրուան կը զուգադիպի:

ա. Կիրակի

բ. Երկուշաբթի

գ. Երեքշաբթի

դ. Չորեքշաբթի

5.- Համբարձումը շաբթուան ո՞ր օրը

կը տօնենք:

ա. Երկուշաբթի

բ. Երեքշաբթի

գ. Չորեքշաբթի

դ. Հինգշաբթի

6.- Պատարագի ընթացքին ո՞վ
(որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս
ի մէջ մեր յայտնեցաւ...»:

ա. Պատարագիչը

բ. Սարկաւազը

գ. Քահանան

դ. Դպիրները

7.- Ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ:

Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ

8.- Ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ:

----- է ----- Քրիստոսի

9.- Այս տարի Հայաստանի Ա.
հանրապետութեան քանիերո՞րդ
տարեդարձն է:

ա. 96

բ. 110

գ. 108

դ. 97

10.- Ո՞ւր ստորագրուեցաւ

Հայաստանի Ա. հանրապետութեան

վերջին դաշնագիրը 10 Օգոստոս

1920-ին:

ա. Սեւր

բ. Լօզան

գ. Պերլին

դ. Փարիզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞րն է Կիրակիներուն ճիշդ շարքը:
 ա. Կրկնագատիկ, Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի
 բ. Կանաչ Կիրակի, Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի
 գ. Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի, Կանաչ Կիրակի
 դ. Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Կրկնագատիկ

2.- Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ.
 ա. Կանաչ Կիրակի
 բ. Կարմիր Կիրակի
 գ. Կրկնագատիկ
 դ. Նոր Կիրակի:

3.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր ետք Համբարձաւ:
 ա. Հինգ
 բ. Յիսուն
 գ. Քառասուն
 դ. Երեք

4.- Յիսուսի Համբարձումը շաբթուան ո՞ր օրը կը տօնենք.
 ա. Երկուշաբթի
 բ. Հինգշաբթի
 գ. Շաբաթ
 դ. Կիրակի:

5.- Այս տարի Հայաստանի առաջին հանրապետութեան հռչակման քանի՞ երորդ տարեդարձն է:

6.- Յովհաննէս Թումանեան իր ո՞ր գործին մէջ Համբարձումի արանդութիւնները կը նկարագրէ:

ա.- Շունն ու Կատուն
 բ.- Անոյշ
 գ.- Սուտլիկ Որսկանը
 դ.- Գիգոր

7.- Հին Կտակարանի ո՞ր դէպքը նշուած է Հայաստանի Հանրապետութեան զինանշանին վրայ:

ա. Տասնաբանեան
 բ. Նոյի Տապանը
 գ. Աշխարհի ստեղծագործութիւնը
 դ. Բաբելոնի Աշտարակը

8.- Ամբողջացո՞ւր 5-րդ պատուիրանը:

Պ----- Հ----- ու -----, որպէսզի կեանքդ ----- ըլլայ այն երկրին վրայ որ ես Տէրը, քու Աստուածդ, քեզի --- ---:

9.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Քրիստոսի համբարձումը.

Մայիս -- ին:

10. Ո՞վ էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայիս 1918-ին:

----- Ե. Սուրենեանց

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ե՞րբ ստորագրուեցաւ Սեւրի
Դաշնագիրը:

Օ-----, 19--

2.- Ո՞րն է հետեւեալ օրերուն շիտակ
շարքը.

ա. Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ, Համբարձում, Տօն Սբ.
Էջմիածնի

բ. Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ, Համբարձում. Տօն Սբ.
Էջմիածնի:

գ. Համբարձում, Երկրորդ
Ծաղկազարդ, Հոգեգալուստ, Տօն Սբ.
Էջմիածնի:

դ. Տօն Սբ. Էջմիածնի, Համբարձում,
Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ:

3.- Հայերէնը ե՞րբ Հայաստանի
Հանրապետութեան պաշտօնական
լեզու հռչակուեցաւ:

ա. Դեկտեմբեր 1917

բ. Դեկտեմբեր 1919

գ. Մայիս 1918

դ. Փետրուար 1921

4.- Ամբողջացո՞ւր.

ա. Մայր -----

բ. Մայր-----

գ. Մայր-----

դ. Մայր-----:

5.- Հետեւեալներէն ո՞վ կրնայ
ձեռնադրութիւն կատարել.

ա. Սարկաւազը

բ. Եպիսկոպոսը

գ. Ծայրագոյն վարդապետը

դ. Աւագ Քահանան:

6.- Հոգեգալուստը Համբարձումէն
քանի՞ օր ետք տեղի ունեցաւ:

ա. Հինգ

բ. Տասը

գ. Տասնըհինգ

դ. Քսան

7.- Աստուածաշունչին ո՞ր գիրքին
մէջ կը կարդանք Հոգեգալուստին
մասին:

ա. Աւետարաններ

բ. Առաքեալներուն գործեր

գ. Պօղոսի նամակներ

դ. Ընդհանրական նամակներ

8.- Ըսէ՛ մէկ բառով

«Դոնապանութիւն, Ընթերցողութիւն,
Երդմսեցուցութիւն կամ
Ջահընկալութիւն ընող».

.....:

9.- Յիսուս 5,000-ը ինչո՞վ կերակրեց

ա. 5 հաց եւ 2 ձուկ

բ. 2 հաց եւ 5 ձուկ

գ. 2 հաց 3 ձուկ

դ. 5 հացեւ 5 ձուկ:

10.- Քանի՞ կողով աւելցաւ 5,000-ը
կերակրելէն ետք:

Լուրեր եւ Նկարներ Կիրակնօրեայէն

Կիրակի՝ 12 Ապրիլին, լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Նոր Կիրակիին (Կրկնագատիկ): Դասարանային պահերը շարունակուեցան ըստ ծրագրին Կիրակի Ապրիլ 19-ին լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Կանաչ Կիրակիին (Աշխարհամատրան), երաժշտութեան պահ ունեցան եւ սկսան պատրաստուիլ ամպերջի հանդեսին:

Կիրակի 26 Ապրիլին, լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Կարմիր Կիրակիին, Յեղասպանութեան 111-րդ տարեդարձին: Դասարանային պահերը շարունակուեցան ըստ ծրագրին:







2025-26 Տարեշրջանի (46-րդ)

Ամապերջի Հանդես՝

Կիրակի՝ 24 Մայիս, 2026

Ժամը 13:30-ին
Բաստրմաճեան Սրահ

3400 rue Nadon, Montreal, Qc H4J 1P5

(մուտքը ազատ)

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
տնօրէն Թորոս Պապիկեանին

WhatsApp : (514)-513-4224

Gmail : sundayschool.sh@gmail.com

www.sourphagop.org

<https://www.facebook.com/sourphagop.org>

https://www.instagram.com/sh_sundayschool/